

« ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻՆ »

(Հասցե՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23)

Պատճենը՝ « Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին (հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1)

Պատճենը՝ Հայցվոր՝ « Ինֆորմացիայի ազատության կենտրոն » հասարակական կազմակերպություն նախագահ Շուշան Դոյրոյանին (ՀՎՀՀ 02568394, Հասցե՝ ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ, հեռ. 010-56-03-60)

Բողոք բերող անձ՝ Պատասխանող՝ « Բնապահպանության նախարարության « Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ » պետական հիմնարկ տնօրեն Վ. Մարտիրոսյան (Հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129, հեռ. 010-65-16-31, 010-65-16-41)

Վերաքննիչ բողոք

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԿԴ /1671/02/12 գործով 23.11.2012թ. վճռի դեմ

(նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով)

2012թ. նոյեմբերի 23-ին « Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (նախագահությամբ դատավոր՝ Ա. Մելքումյանի) իր վարույթում գտնվող թիվ ԵԿԴ /1671/02/12 քաղաքացիական գործով կայացրել և հրապարակել է վճիռ, որով մասնակի բավարարել է « Ինֆորմացիայի ազատության կենտրոն » հասարակական կազմակերպությունն (այսուհետ՝ հայցվոր) ընդդեմ « Բնապահպանության նախարարության « Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ » պետական հիմնարկի (այսուհետ՝ պատասխանող)՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասին հայցը: Նշված վճիռը ստացվել է 13.12.2012թ-ին:

Վճիռն անհիմն է և ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1) Նախ, դատարանը նշել է հետևյալը. «...դատարանը փաստում է, որ պատասխանողին ուղղված գրության մեջ վկայակոչված հարցերը հիմնավորելու որևէ պարտավորություն պատասխանող կողմը չէր կրում և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով՝ այնտեղ վկայակոչված հարցերը դիմողը պարտավոր չէր հիմնավորելու, իսկ դրանց ոչ պարզ, ոչ հստակ ու անորոշ լինելու դեպքում՝

պատասխանողը կարող էր պատասխան գրությամբ դիմել հայցվորին՝ դրանք պարզաբանելու խնդրանքով, ինչպիսի վարքագիծ մինչև դատարան դիմելու պահը իրականում պատասխանողի կողմից չի դրսևորվել>>: Նշեմ, որ հայցվորին հասցեագրված հարցումների վերաբերյալ համապատասխան գրություններում, ինչպես նաև դատաքննության ողջ ընթացքում պատասխանողի կողմից չի բարձրացվել այն հարցը, թե հարցումների 2-րդ կետով շարադրված նախադասության բովանդակությունը պատասխանողի համար ոչ պարզ կամ ոչ հստակ և անորոշ է, այլ նշվել է, որ այն հայցվորի կողմից մեկնաբանվում է յուրովի. մեջբերում հայցադիմումի պատասխանից. <<...Ուստի հայցվորի կողմից քերականական ոչ ճիշտ մեկնաբանումը արդեն իսկ կարող է փարընթերցումների փոփոխ հանդիսանալ: Այս ամենից պարզ է դառնում, որ **հայցվորը վերնշված նախադասությունը մեկնաբանում է իրեն հարմար փարբերակով**, չնայած որ նախադասությունները պետք է հասկանալ և մեկնաբանել իր փառացի նշանակությանը համապատասխան:>>: Հայցադիմումի պատասխանից կատարված մեջբերումը փաստում է, որ պատասխանող կողմը չի բարձրացրել հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության ոչ հստակ կամ ոչ պարզ լինելու հանգամանքը և այն պարզաբանելու խնդրանքով հայցվորին համապատասխան գրությամբ դիմելու անհրաժեշտություն չէր կարող առաջանալ, ուստի այդ իսկ պատճառով նման վարքագիծ չի դրսևորել: Հետևաբար դատարանի կողմից արված այս փաստարկը անընդունելի է:

2) Դատարանը իր վճռով մեկնաբանել է հայցվորի հարցումների 2-րդ կետով շարադրված նախադասության բովանդակությունը, մեջբերում վճռից. <<...գրության 2-րդ կետով ներկայացված՝ <<Եթե այո, ապա ուլքեր են պարզակարգվել (ըստ հաստիքների) և ինչքան գումարով (ինչ նվերով)՝ հարցի ձևակերպումից ակնհայտ է, որ հայցվորի կողմից պահանջված հարցումը չի կրել անհատական բնույթ, քանի որ <<ուլքեր են պարզակարգվել>> հարցին ակնկալվող պատասխանն ինքնին բացահայտվել է <<ըստ հաստիքների>> փակագծերում նշված արտահայտությամբ, այսինքն՝ հարցն ու դրա ակնկալվող պատասխանն ինքնին պետք է վերաբերեին հաստիքներին, այլ ոչ թե կոնկրետ աշխատողների անվանական փյալներին, իսկ <<ուլքեր>> դերանունը վերագրվել է ոչ թե կոնկրետ անձին բնորոշ փյալներին՝ անվանը, ազգանվանը, հայրանվանը և այլն, այլև՝ այս կամ այն հաստիքը զբաղեցնող անձին կամ անձանց, օրինակ՝ իրավաբանի, հաշվապահի և այլ հաստիքներին, որոնց վերաբերյալ փորձեցություն հայցելուց գրական հայերենով, քերականորեն ճիշտ պետք է հարցը ձևակերպվի <<ուլքեր>> դերանվան միջոցով, քանի որ հարցը ոչ թե վերաբերում էր զուտ հաստիքներին, այլև՝ այն անձանց, առանց որևէ անվանական փյալների բացահայտման, որոնք զբաղեցնում են այս կամ այն հաստիքները (օրինակ՝ իրավաբանի հաստիքը զբաղեցնող անձինք և այլն), իսկ <<ուլքեր>> **դերանվան օգտագործմամբ հայցորն ի նկատի է ունեցել հաստիքները զբաղեցնող անձանց**, այդ իսկ պատճառով գրավոր հարցման մեջ օգտագործվել է ոչ թե <<ինչ հաստիքներ են պարզակարգվել>> հարցադրումը, այլև՝ վերը նշված պարճառաբանությամբ օգտագործվել է <<ուլքեր>> դերանունը, իսկ <<ըստ հաստիքների>> բացահայտող արտահայտությամբ՝ հայցվորը ակնկալել է ստանալու աշխատողների ոչ անհատավորված, այլ՝ այս կամ այն հաստիքը զբաղեցնող փաստով պայմանավորված պարզակարգումների ու դրանց չափի մասին փորձեցություն՝ իրականացնելով ազատ փորձեցություն ստանալու իր իրավունքը, որն այս դեպքում սահմանափակված չէ ոչ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքում, ոչ էլ <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով:>>: Դատարանի կարծիքով <<ուլքեր>> դերանունը վերաբերում է ոչ թե որոշակի մասնագիտությամբ օժտված անուն-ազգանուն ունեցող քաղաքացուն, այլ հաստիքը զբաղեցնող անձին, օրինակ՝ ըստ դատարանի, իրավաբանի հաստիք զբաղեցնում է ոչ թե անուն ազգանունով օժտված անհատը, այլ մասնագիտությամբ անձնավորված անձը, այսպես՝ իրավաբան-հաստիք՝ իրավաբան, հաշվապահ-հաստիք՝ հաշվապահ: Նման

մեկնաբանությունն անհասկանալի և անընդունելի է մեզ համար: Հարկ է նշել, որ փակագծի մեջ նշված «<ըստ հաստիքների>> արտահայտությունը ոչ թե ճշգրտում է ուժքեր են պարզևատրվել հարցը, այլ ավելացնում է լրացուցիչ տեղեկատվության պահանջ, այն է, տեղեկատվություն նաև ըստ հաստիքների:

Առավել պարզ լինելու համար ստիպված ենք վկայակոչել «<Հայոց լեզվի շարահյուսություն>> 7-8-րդ դասարանների համար նախատեսված դասագրքից (40-րդ հրատարակություն) քաղվածք. «<Փակագծերի մեջ են առնվում այնպիսի միջանկյալ նախադասություններ և բառեր, որոնք շար ազար կերպով կարող են հանվել, զեղչվել կամ նախադասության հետ քերականորեն չկապակցված, լրացուցիչ տեղեկափոխ իմաստ արտահայտող բառերը>>: Հետևաբար, հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության մեջ «<ըստ հաստիքների>> առկա բառակապակցությունը, ըստ դատարանի, քերականորեն կապված է տվյալ նախադասության հետ և լրացուցիչ տեղեկատու իմաստ չի արտահայտում: Այսինքն, դատարանը համարում է, որ մեջբերում եմ .«< <ուժքեր են պարզևատրվել>> հարցին ակնկալվող պատասխանն ինքնին բացահայտվել է «<ըստ հաստիքների>> փակագծերում նշված արտահայտությամբ, այսինքն՝ հարցն ու դրա ակնկալվող պատասխանն ինքնին պետք է վերաբերեն հաստիքներին...>>: Այսինքն այն լրացուցիչ պարզաբանում չի պարունակում հիմնական խոսքաշարի վերաբերյալ: Հետևաբար, դատարանի մեկնաբանությունը հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության վերաբերյալ համարում եմ քերականական ոչ ճիշտ ընտրված:

Այստեղից պարզ է դառնում, որ դատարանը հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության բովանդակությունը համարում է պարզ և հասկանալի, ապա ինչու վճռի եզրափակիչ մասում մասնակի բավարարելով հայցը՝ պատասխանողին պարտավորեցնում է տալ տեղեկատվություն առանց հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տեսքով շարադրված և նման կերպ ձևակերպված նախադասությամբ. Մեջբերում վճռից. «<...պարտավորեցնել «< բնապահպանության նախարարության «<Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկին տրամադրելու տեղեկատվություն առ այն, թե 2011թ.-ին հիմնարկի աշխատակիցներն ինչքան գումարով են պարզևատրվել՝ տեղեկատվությունը տրամադրելով ըստ հաստիքների, առանց հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տեսքով: >>: Մեզ համար պարզ է և միաժամանակ որոշակի դատարանի եզրափակիչ մասում շարադրված վերը նշված նախադասությունը, ինչը ողջ դատաքննության ընթացքում մենք փորձեցինք բացատրել հայցվորին իր կողմից հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության բովանդակային էական տարբերությունը իր կողմից նախադասությունը ընկալելու համեմատությամբ, քանի որ նախադասությունները պետք է նախ հասկանալ և մեկնաբանել դրա տառացի նշանակությանը համապատասխան: Միաժամանակ անհասկանալի է դատարանի՝ հայցվորի հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության վերաբերյալ վճռում արված մեկնաբանությունը, ըստ որի դատարանը այն համարում է պարզ և որոշակի, ապա ինչու դատարանը իր վճռի եզրափակիչ մասում չի շարադրել այդ նախադասությունը, որը համարում էր հասկանալի. դատարանը իր կողմից ավելացրել է «<... առանց հիմնարկի աշխատակիցների անվանական տվյալները բացահայտելու տեսքով>> ձևակերպումը: Հետևաբար, դատարանի կողմից արված մեկնաբանությունը հայցվորի հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության վերաբերյալ համարում եմ ոչ ճիշտ :

Այստեղ պարզ երևում է, որ դատարանը իրական տարբերություն է դնում շարադրված նախադասությունների բովանդակության վերաբերյալ, հակառակ դեպքում այն պետք է լիներ միատեսակ շարադրված:

3) Դատարանը վճռով փաստում է, մեջբերում եմ. <<...վերը նշված հանգամանքների առումով հայցվորի պատասխանում վկայակոչված փաստարկները, ինչպես նաև այն փաստարկը, որ պատասխանողը չէր կարող տրամադրել իր աշխատողների դրամական կամ նվերով պարգևատրման վերաբերյալ տեղեկատվություն՝ նրանցից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին միայն հաստիքային նշագրմամբ, քանի որ դա կարող էր լինել աշխատողների անվանական փվյալներ համապատասխան հաստիքներով նրանցից յուրաքանչյուրի համար առանձին պարգևատրման չափերով, **դատարանն անհիմն է համարում**, քանի որ աշխատողների անվանական փվյալները չբացահայտելով՝ հեշտությամբ հնարավոր էր նշել այս կամ այն հաստիքը զբաղեցնող անձանց այն թիվը, որոնք ստացել են պարգևատրում, որոնք՝ ոչ, ինչպես նաև հնարավոր էր նշել պարգևատրման գումարի չափը: Այսինքն, վերը նշված պարճառաբանություններից ելնելով՝ դատարանը հաստատված է համարել, որ հարցումը եղել է ձևավորված պարզ ու ընկալելի ձևով, ու դրան պատասխանողը կարող էր պատասխանել այնպես, որպեսզի չբացահայտվեին աշխատողների անհատական փվյալները, այնինչ այդ ուղղությամբ պատասխանող կողմը որևէ քայլ չի ձեռնարկել՝ բավարարվելով գրավոր հարցման 2-րդ կետով սահմանված խնդրանքն ամբողջությամբ մերժելու վարքագիծ դրսևորելով, արդյունքում՝ խախտվել է հայցվորի՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը: >>:

Դատարանի այս փաստարկը համարում եմ անընդունելի, քանի որ հարցման 2-րդ կետով շարադրված նախադասության բովանդակությունը թույլ չի տալիս այն մեկնաբանել այլ տարբերակով, այլ կարծիք լինել չի կարող կամ պատասխանողը չէր կարող գուշակությամբ զբաղվել՝ նախապես կանխորոշելով հայցվոր կողմի շարադրած նախադասության հայցվորին հարմար տարբերակով ընկալելու հնարավորությունը: Հետևաբար դատարանի այն պնդումը, որ պատասխանող կողմը գրավոր հարցման 2-րդ կետով սահմանված խնդրանքն ամբողջությամբ մերժելու վարքագիծ է դրսևորել, և արդյունքում խախտվել է հայցվորի՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը, նույնպես անընդունելի է մեր կողմից, քանի որ օրենքով պաշտպանվող տեղեկատվություն չտրամադրելը չէր կարող խախտել ինչպես ցանկացած անձի, այնպես էլ հայցվորի ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Հարկ է նշել նաև, որ հարցերին պատասխանում են հարցի բովանդակությանը համապատասխան, այլ ոչ թե շարադրված հարցին պետք է պատասխանել նախապես գուշակելով, թե ինչպիսի պատասխան է ակնկալում ստանալ հարց տվողը՝ այս դեպքում հայցվորը, հետևաբար դատարանի նմանատիպ փաստարկները և դատողությունները չի կարելի համարել քաղաքակիրթ ու ժողովրդավար հասարակությանը անհրաժեշտ և արդար դատավարությանը միտված վարվելակերպ:

4) Դատարանը իր վճռով փաստում է նաև, մեջբերում եմ. <<... <<**Տեղեկատվության ազատության մասին**>> ՀՀ օրենքի 12 հոդվածի 3-րդ կետի համաձայն, ի թիվս այլի, տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն փնտրողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավասարի և իր փնտրիչության փակ գտնվող ամբողջական տեղեկություն: Քննվող գործով <<Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի 02.07.2012թ. գրությամբ 2-րդ հարցով <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության բարձրագրած խնդրանքը հստակ կերպով մերժվել է, իսկ մերժման գրության մեջ պատասխանողը չի նշել ոչինչ՝ հարցի պարզաբանման անհրաժեշտության մասին, հարցը ոչ պարզ լինելու, իր մեջ որևէ անորոշություն պարունակելու վերաբերյալ: Մինչդեռ դատարանի վերը նշված դիրքորոշման լույսի ներքո պետք է փաստել, որ հարցը կոնկրետ աշխատողների անհատական հատկանիշների բացահայտման փրոպոթում հասկացվելու հիմքեր չկային, իսկ եթե, այնուամենայնիվ, պատասխանողն այդպես կարող էր ընկալել, ապա անգամ այդ դեպքում Օրենքի վերը նշված

պահանջից ելնելով՝ վերջինս պարտավոր էր տրամադրել իր տնօրինության տակ գտնվող ամբողջ տեղեկատվությունը, իսկ պահանջվող տեղեկատվության ամբողջի մի մասն է կազմում ըստ հաստիքների ու յուրաքանչյուրի մասով վճարված պարգևատրումների չափի վերաբերյալ տեղեկատվությունը, որը ստանալու հայցվող կողմի իրավունքը **որևէ իրավական ակտով սահմանափակված չէ**, ինչն **ընդունել է նաև պատասխանող կողմը**, ուստի եթե պատասխանողը, մերժման գրության մեջ նշված պատճառաբանություններից ելնելով, չի տրամադրել աշխատողների անհատական հատկանիշների բացահայտող տեղեկատվությունը, ապա տնօրինվող տեղեկատվության մնացած մասը՝ ըստ հաստիքների ու յուրաքանչյուրի մասով վճարված պարգևատրումների չափի վերաբերյալ տեղեկատվությունը, վերջինս պարտավոր էր տրամադրելու: Օրենքի վերը նշված պահանջից ելնելով, և հենց այդ տեղեկատվությունն էլ ակնկալում էր ստանալու տեղեկատվություն հայցող կողմը, իսկ Օրենքի այդ պահանջը պատասխանողի կողմից պահպանվելու ու փաստացի կիրառվելու արդյունքում՝ սույն հայցով պահանջվող տեղեկատվությունը հայցվորը կստանար ու անհարկի չէր խախտվի վերջինիս՝ Օրենքով սահմանված՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը և դատական կարգով այն վերականգնելու անհրաժեշտություն ինքնին չէր առաջանա:»:

Հարկ է նշել, որ նախ, դատարանը սխալ է մեկնաբանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 3-րդ կետ, և երկրորդ, վճռով փորձում է տպավորություն ստեղծել, թե պատասխանող կողմը ընդունել է, որ որևէ իրավական ակտով հայցվոր կողմի իրավունքը չի սահմանափակում: Նշեմ, որ ամբողջական տեղեկատվություն կարող է տրամադրվել միայն այն դեպքում, երբ չի խախտվում ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով սահմանված անձանց իրավունքները, այս դեպքում պատասխանողի կողմից տրամադրվելու դեպքում կխախտվեր «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի աշխատողների ՀՀ սահմանադրությամբ (ՀՀ Սահմանադրության 23 և 43 հոդվածներ) և ՀՀ օրենքներով («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետ և 199 հոդված) երաշխավորված իրավունքները: Այսպիսով, վերլուծելով վերը նշված հոդվածները, պարզ է դառնում, որ դատարանի կողմից դիտավորյալ հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրության և օրենքների համապատասխան հոդվածների պահանջները և ընդհանրապես վճռում դատարանը չի անդրադարձել պատասխանողի կողմից դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանում որպես առարկման հիմք հանդիսացած վերը նշված իրավական ակտերի պահանջներին, որով պատասխանող կողմը հիմնվել է մինչև դատաքննությունը և դատաքննության ողջ ընթացքում:

Դատարանի այն պնդումը, թե պատասխանող կողմը համաձայն է եղել տեղեկատվություն տրամադրելու հայցվորի կողմից ներկայացված հարցման 2-րդ կետով շարադրված խնդրանքին՝ ներկայացնելու ամբողջական տեղեկատվություն (վճռում բազմաթիվ անգան դատարանը անդրադարձել էր), չի համապատասխանում իրականությանը, քանի որ պատասխանող կողմը կարող էր տրամադրել տեղեկատվություն միայն այն դեպքում, երբ չէր խախտվի պետական հիմնարկի աշխատողների ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքները, այն է միայն հաստիքների, առանց հիմնարկի աշխատողների անվանական տվյալները բացահայտելու տեսքով տալ տեղեկատվություն:

5) Հարկ է նշել, որ դատարանի այն պնդումը, թե «...պատասխանողը...օրենքի պահանջից ելնելով՝ պետք է գրավոր մերժման մեջ նշեր նաև նման տեղեկատվության բացակայության փաստը, սակայն վերջինս բավարարվել էր **հարցման սեփական և այն էլ ոչ պարզաճ ընկալման փաստով, ու տեղեկատվությունը տրամադրելու անհնարինության այլ փաստեր չէր արձանագրել**», չի համապատասխանում իրականությանը, քանի որ ինչպես հայցվորին ուղղված իր

գրություններում, այնպես էլ հայցադիմումի պատասխանում պատասխանող կողմը, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, նշել է, որ տեղեկատվությունը մերժել է հիմք ընդունելով ՀՀ սահմանադրության և օրենքների համապատասխան հոդվածների պահանջները, մեջբերում 02.07.2012թ. N 1-01/160 գրությունից. « Ինչ վերաբերվում է յուրաքանչյուր աշխատողին տրված պարզապարմանը, հարկ եմ համարում Ձեր ուշադրությունը հրավիրել այն իրավական նորմի դրույթին, որը սահմանում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ն մասով սահմանվում են տեղեկատվության ազատության սահմանափակումները: Այս հոդվածի բովանդակությունից հստակ երևում է, որ տեղեկատվության տրամադրումը մերժվում է, եթե դա հանդիսանում է նաև մարդու անձնական և ընտանեկան գաղտնիք, ուստի պետական հիմնարկի աշխատողների պարզապարման վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես համարվում է մարդու կամ քաղաքացու անձնական կյանքի բաղկացուցիչ մաս:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հեղուկալ պահանջները. աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199 հոդվածի համաձայն աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները տրամադրվում կամ հրապարակվում են միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ:», սակայն դատարանի կողմից տեղեկատվությունը տրամադրելու անհնարինության այս փաստի առկայությունը չի ընդունվել:

Դատարանը, եթե համակողմանի վերլուծեր գործում առկա բոլոր ապացույցները, այդ թվում նաև հայցադիմումի պատասխանը, կհանգեր այն եզրակացության, որ պատասխանող կողմը հայցվորի հարցման 2-րդ կետին չի պատասխանել, քանի որ ՀՀ սահմանադրության և օրենքների «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան հոդվածների պահանջները **թույլ են տվել** պատասխանողին որպես գործատու չտալ իր տնօրինության տակ գտնվող հայցվորի պահանջած տեղեկատվությունը հարցման 2-րդ կետի վերաբերյալ:

6) Դատարանը նաև փաստել էր, որ մեջբերում եմ. «... Վերը նշված փաստերի համադրումից հետևում է, որ պահանջը հստակ պարզաբանվել է գործի դատաքննության ընթացքում հայցվորի կողմից, այդ պարզաբանումն ընդունվել է պատասխանողի կողմից, դատարանը տրամադրել է ժամկետ հաշվովելու համար, ինչպես նաև ժամկետ՝ ստեղծված իրավիճակում հայցով ներկայացված պահանջը կատարելու, հետևաբար՝ նաև հայցվորի խախտված իրավունքը վերականգնելու համար, ինչը կատարելու արդյունքում հայցը կարող էր մերժվել՝ հայցային պահանջը փաստացի կատարված լինելու հիմքով, սակայն նման իրավիճակում գործի դատաքննությամբ պատասխանող կողմը որևէ ակտիվ գործողություն չի ցուցաբերել՝ առաջ քաշելով հայցվորի կողմից հայցից հրաժարվելու անհիմն նախապայմանը, ինչը կարող էր տեղի ունենալ միայն, եթե հայցային պահանջը փաստացի կատարվեր:»: Այստեղ խոսքը վերաբերվում է հայցվորի պահանջին, այն է. 1. ճանաչել իրավունքի խախտման փաստը. 2. պարտավորեցնել տալ տեղեկատվություն, այս պարագայում պատասխանող կողմը չի ընդունում իրավախառն փաստի առկայությունը, և արդյոք տրամաբանական կլիներ ընդունելու այն, հակառակ դեպքում ինչ իմաստ կունենար մեր կողմից հայցվորի տեղեկատվություն տրամադրելը մերժելը և դատարանում հայցի դեմ

առարկելը: Այնպես որ դատարանի վերը նշված փաստարկները նույնպես մեզ համար անընդունելի են:

7) Դատարանի այն պնդումը, թե, մեջբերում վճռից. <<...Օրենքի ուժով պատասխանողը, անկախ տեղեկատվությունը որպես աշխատողի անհատական տվյալներից բխելու ոչ ճիշտ ընկալման փաստից, պարտավոր էր տրամադրելու իր տնօրինության ներքո գտնվող ամբողջ տեղեկությունը, որը **օրենքով պաշտպանված չէ, անգամ եթե հարցման էությունն ընկալել էր ոչ ճիշտ**, պարտավոր էր մերժելու հայցվող տեղեկատվությունը միայն մասնակի՝ մյուս մասով տրամադրելով օրենքով չպաշտպանված, այսինքն՝ ըստ հաստիքների տեղեկատվությունը:», չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից, քանի որ ՀՀ սահմանադրության, <<Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի մեր կողմից հայցվորի հարցման և հայցադիմումի պատասխաններում մատնանշած հոդվածների բովանդակությունից երևում է, որ հայցվորի պահանջած հարցման 2-րդ կետի վերաբերյալ տեղեկատվությունը օրենքով պաշտպանված է, այսպիսով. ՀՀ Սահմանադրության 23 հոդվածը սահմանում է. <<Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով: ...>>:

ՀՀ Սահմանադրության 43 հոդվածը սահմանում է << Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:»>:

Հարկ եմ համարում Ձեր ուշադրությունը հրավիրել նաև այն իրավական նորմի դրույթին, որը սահմանում է <<Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը. <<Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:»>:

<<Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ն մասով սահմանվում են տեղեկատվության ազատության սահմանափակումները, ըստ որի.

<<1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

... 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը...>>:

Այս հոդվածի բովանդակությունից հստակ երևում է, որ տեղեկատվության տրամադրումը մերժվում է, եթե դա հանդիսանում է նաև մարդու անձնական և ընտանեկան գաղտնիք, ուստի պետական հիմնարկի աշխատողների պարզևատրման վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես համարվում է մարդու կամ քաղաքացու անձնական կյանքի բաղկացուցիչ մաս:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածի 1-ին մասը սահմանում է. <<աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված և որոշակի աշխատողին վերաբերող՝ գործաբուհի անհրաժեշտ տեղեկություններն են:»>:

«ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետ սահմանում է, «աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները.

1) աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, ...»:

«ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199 հոդվածի համաձայն «աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները փրամադրվում կամ հրապարակվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ»:

«Ետևաբար, դատարանի կողմից պատասխանողի առարկության հիմքում ընկած իրավական ակտերի պահանջները հաշվի չեն առնվել, այդ իսկ պատճառով դատարանի կողմից կայացվել և հրապարակվել է անհիմն վճիռ:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Վճիռը կայացվել է դատավարական իրավունքի նորմի խախտումով.

Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է. «Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ»:

Նշված պնդումը պատճառաբանվում է հետևյալ փաստարկով.

Դատարանի կողմից իր վճռում գործում եղած բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն չի կատարել: Դատարանը որևէ ձևով չի հետազոտել պատասխանողի ներկայացրած ապացույցները՝ բավարարվելով միայն հայցվորի և պատասխանողի կողմից դրանց շարադրանքով, և բացարձակապես չի լուծել դրանց գնահատման հարցը, այսինքն, դատարանը պատասխանողի առարկության հիմքում ընկած իրավական ակտերի վերաբերյալ որևէ մեկնաբանություն կամ անդրադարձ չի կատարել:

Վճիռը կայացվել է նյութական իրավունքի նորմերի խախտումներով.

1. Դատարանը չի կիրառել, սակայն պետք է կիրառեր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ն մասի պահանջները, որոնցով սահմանվում են տեղեկատվության ազատության սահմանափակումները, ըստ որի.

«1. Տեղեկատվություն փնտրիչները, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության փրամադրումը, եթե դա՝

... 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը...»:

Նշված պնդումը պատճառաբանվում է հետևյալ փաստարկով.

Դատարանի կողմից իր վճռում չի անդրադարձել տեղեկատվության ազատության սահմանափակումներին, քանի որ պատասխանողը, մերժելով տեղեկատվության

տրամադրումը հայցվորին, առաջին հերթին հղում էր կատարվել նաև վերը նշված իրավական ակտի պահանջերին:

2. Դատարանը չի կիրառել, սակայն պետք է կիրառեր ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածի 1-ին մասի և 134-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131 հոդվածի 1-ին մասը սահմանում է. «*աշխատողի անձնական փոխանցումը աշխատանքային հարաբերությունների հետ կապված և որոշակի աշխատողին վերաբերող՝ գործարարին անհրաժեշտ փոփոխություններն են*»:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետը սահմանում է, «*աշխատողի անձնական փոխանցումը փոխանցելիս գործարարն պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները.*

1) *աշխատողի անձնական փոխանցումը չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության,...*»:

Նշված պնդումը պարճառաբանվում է հետևյալ փաստարկով.

Դատարանի կողմից իր վճռում ընդհանրապես չի անդրադարձել ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերը նշված դրույթներին, սակայն գործի արդյունավետ քննության և արդար վճիռ հրապարակելու համար անհրաժեշտ էր վերը նշված հոդվածների կիրառումը դատարանի կողմից, քանի որ հայցվորի հարցման 2-րդ կետով պահանջված տեղեկատվությունը պատասխանողի կողմից մերժվել էր նաև այս իրավական ակտի պահանջները հաշվի առնելով, հետևաբար դատարանը հայցվորի հայցը բավարարել էր, իսկ պատասխանողի այն իրավական փաստարկները, որոնք ընկած էին հայցադիմումի պատասխանի հիմքում չի ընդունել և վճիռը կայացրել է առանց անդրադառնալու պատասխանող կողմի առարկության հիմքում առկա իրավական ակտերի պահանջների վրա:

3. Դատարանը չի կիրառել, սակայն պետք է կիրառեր ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199 հոդվածի պահանջները, որը սահմանում է. «*աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ փոխանցումը փրամադրվում կամ հրապարակվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ*»:

Նշված պնդումը պարճառաբանվում է հետևյալ փաստարկով.

Դատարանի կողմից իր վճռում ընդհանրապես չի անդրադարձել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերը նշված դրույթին, սակայն անհրաժեշտ էր, քանի որ հայցվորի կողմը պահանջել էր տրամադրելու տեղեկատվություն պետական հիմնարկի աշխատողների պարգևատրման և դրա չափի վերաբերյալ:

Հայցվորը պարգևատրումը չի համարում աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալներ, սակայն աշխատանքային օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «*Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը*»:, իսկ աշխատանքային օրենսգրքի 195 հոդվածի համաձայն աշխատանքի վարձատրության տեսակ է համարվում լրացուցիչ աշխատավարձը, որի մեջ մտնում է նաև պարգևատրումը:

Հետևաբար, ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերնշված հոդվածների տառացի մեկնաբանությամբ պարզ է դառնում, որ հայցվորի կողմից պարզևատրումը կամ պարզևատրման չափի վերաբերյալ տվյալները ոչ այլ ինչ են, քան աշխատավարձի վերաբերյալ տվյալներ, սակայն դատարանը հաշվի չի առել վերը նշված օրենքի պահանջները և կայացրել է անհիմն վճիռ:

Վերը թվարկված նյութական և դատավարական իրավունքի նորմերի բազմաթիվ ակնհայտ ու կոպիտ խախտումների հետևանքով դատարանը եկել է սխալ եզրահանգման և կայացրել է ՀՀ օրենսդրությանը հակասող վճիռ:

Ելնելով վերը նշվածից, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 209-րդ, 210-րդ, 211-րդ, 220-րդ ու 221-րդ հոդվածների պահանջներով՝

Խ ն դ ռ ու մ ե մ

1. Սույն վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:
2. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի թիվ 1671/12/02 քաղաքացիական գործով 2012թ. նոյեմբերի 23-ին կայացրած վճիռն ամբողջությամբ բեկանել:

Ակնկալում եմ նաև, որ Հայաստանի Հանրապետությունն, ի դեմս Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի, ի տարբերություն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, կապահովի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանողի արդարացի դատաքննության իրավունքի իրագործումը:


Կից ներկայացնում եմ՝

1. Սույն վերաքննիչ բողոքը հայցվորին և ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանին ուղարկելու մասին ապացույցները (2 թերթ),
2. Պեղական փուրքի վճարման անդորրագրի բնօրինակը (1 թերթ),
3. Լիազորագիր (1 թերթ),
4. Բողոքարկվող դատական ակտի պատճենը:

Բողոք բերող անձ՝

<<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի տնօրեն

Վ. Մարտիրոսյան



<<17>> <<ղեկտեմբերի>> 2012թ.